

«ՎԷՄ» երկամսեայ հանդէս մշակոյթի եւ դասնութեան

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (1933-1939)

Ավելի քան 200-ամյա հայ մամուլի պատմության ընթացքում հասարակական-քաղաքական ուղղվածության պարբերականների թիվն այնքան էլ մեծ չէ, իսկ ահա գիտական լուրջ արժեք ունեցող հանդեսները կարելի է մատների վրա հաշվել: Անշուշտ, այդպիսիք երբեմն զուգահեռաբար նաև գիտամշակութային դերակատարություն են ունեցել: 20-րդ դարն այդ առումով որոշակի զարթոնք է արձանագրել, անգամ Մեծ եղեռնը վերապրած Սփյուռքում, որտեղ կարծես թե իր ուժն ու եռանդը սպառած ժողովուրդը թվում է՝ պետք է բավարարվեր լավագույն դեպքում օրաթերթերով:

Սակայն, արդեն 1922թ. Բոստոնում սկսվեց հրատարակվել «Հայրենիք»-ը, իսկ դրանից ընդամենը 10 տարի անց Փարիզում՝ 1933թ. սկիզբ առավ մեկ այլ հանդէս՝ «ՎԷՄ»-ը: Ինչ խոսք, այն «Հայրենիք»-ի համեմատ կարճատև կյանք ունեցավ, բայց և այնպես իր ուրույն հետազոտչական թողեց, ի գորու եղավ ներկայացնել ու պահպանել սեփական դիմագիծը, իսկ խմբագիրներ Ռ. Դարբինյանի ու Ս. Վրացյանի «հեռակա մրցակցությունը» փոխադարձաբար արդյունավետ եղավ: Ավելին, ժամանակի հետավորությունից հարկ է փաստել, որ «ՎԷՄ»-ը Եվրոպայի ու Մերձավոր Արևելքի հայօջախների համար ավելի կարևոր դերակատարություն ունեցավ, քան «Հայրենիք»-ը:

Ինչ խոսք, այդ ամենում թե՛ հանդեսը և թե՛ ժամանակի ու ապագայի ընթերցողները պարտական են առաջին հերթին «ՎԷՄ»-ի խմբագրին՝ Սիմոն Վրացյանին, որին առանձնակի ներկայացնելու անհրաժեշտություն չկա: Նրա խմբագրած-հրատարակած պարբերականների թիվը մեկ տասնյակի է հասնում, իսկ գրքերն իրենց արժանի տեղն են զբաղեցնում հայոց նորագույն քաղաքական հուշագրության մեջ¹:

¹ Տե՛ս Անկախ և Միացեալ Հայաստան, Երևան, Պոսթըն, 1920: Բանակցութիւններ Ազգային Պատվիրակութեան և Հայաստանի Պատվիրակութեան միջև, Պոսթըն, 1920: Խարխափումներ, Պոսթըն, 1924: Հայաստանի Հանրապետութիւն, Փարիզ, 1928, Պէյրուք, 1958, Թեհրան, 1982, Երևան, 1993: Հայաստան և Ափիւռք, Թեհրան, 1956: Հայաստանը բոլշեւիկեան մուրճի և թուրքական սալի միջև, Պոսթըն, 1941, Պէյրուք, 1953: Կեանքի ուղիներով, հ. Ա., Գահիրէ, 1955, հ. Բ.-Ձ., Պէյրուք, 1960, 1963, 1965-1967: Հին թղթեր նոր պատմութեան համար, Պէյրուք, 1962: Անձինք նուիրեալք: Պէյրուք, 1969: Ինչո՞ւ և ինչպե՞ս խորհրդայնացաւ Հայաստանը, Թեհրան, 1982: Սրբկածին Դրոն, Պէյրուք, 1996:

Մեկ կարևոր հանգամանք ևս: Ս. Վրացյանը, լինելով ՀՅԴ անվանի գործիչ, «ՎԷՄ»-ը գուտ կուսակցական պարբերական չդարձրեց՝ միաժամանակ պահպանելով նրա գաղափարաքաղաքական ուղղվածությունը: Հարկ է շեշտել սակայն, որ այս հանդեսի վերաբերյալ ասվածն ու գրվածը կիսատ կմնա այնքան ժամանակ, քանի դեռ չեն հրապարակվել թե՛ «ՎԷՄ»-ի և թե՛ հատկապես՝ Ս. Վրացյանի արխիվային դիվանները:

«ՎԷՄ»-ը հրատարակվել է որպես «Երկամսեայ հանդես մշակոյթի և պատմութեան», չնայած հետագա տարիներին նրա պարբերականությունը խախտվել է: «ՎԷՄ» անունը նկարել էր երիտասարդ գրող և նկարիչ Եղիա Գասպարյանը:

Իր առաջին իսկ խմբագրականով Ս. Վրացյանը ներկայացրել ու հիմնավորել է «ՎԷՄ»-ի հրատարակության նպատակներն ու խնդիրները. «Թերթ ու պարբերական շատ ունինք արտասահմանում, կարելի է ասել՝ շոքայութեան աստիճան շատ, այդ պատճառով այս նոր հանդէսը ոմանց կողմից, թերևս, դիտուի ուժերի և նիւթական միջոցների աւելորդ սպառում: Մեզ թում է, որ այսպէս մտածողները կը սխալուեն: Մեր համոզումով «ՎԷՄ»-ը ծնունդ է կեանքի իրական պահանջի: Ի՞նչ է լինելու «ՎԷՄ»-ի նպատակը, նրա զբաղումի հիմնական առարկան: Երկու խօսքով՝ **ՄՇԱԿՈՅԹ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ**»²:

Համոզված լինելով, որ «մշակոյթը իր էութեամբ ազգային է», «ՎԷՄ»-ի խմբագիրը խնդիր էր դնում «բարձրացնել ու կատարելութեան հասցնել»³ հայ մշակոյթը: Միաժամանակ, հարցը քննարկելով քաղաքական տեսանկյունից՝ նա հստակ կերպով գնահատում էր խորհրդային և Սփյուռքի իրականության պայմաններում հայ մշակոյթին սպասվող վտանգավոր մարտահրավերները. «Հայ մշակոյթն էլ իր գոյութեան պայմաններով և զարգացման հնարաւորութիւններով գտնուում է երկու տրամագծօրէն տարբեր միջավայրերի ազդեցութեան ներքոյ - այնտեղ՝ առարկայ ընկերային խելացնոր փորձերի, այստեղ՝ ուժացման ու փոշիացման սպառնալիքի տակ»⁴: Նման իրադրությունում երկուսի համար էլ «ստիպողական» էր համարվում «ինքնապաշտպանութիւնը, ազգային մշակոյթի, հետևաբար և ազգային հաւաքական գոյութեան հնարաւորութիւնների ամրապնդման պահանջը: Այնտեղ՝ պաշտպանել **բռնի** այլասերման և ապագայնացման դէմ. այստեղ՝ պաշտպանել **ազա՛տ** այլասերման և ապագայնացման դէմ»: Վերոնշյալի առումով «ՎԷՄ»-ը իր խնդիրն էր համարում. «Վեր հանել անցեալի ու ներկայի արժէքները, շնչել ազգային մշակոյթի մթնոլորտում, համակել, ապրել ու ոգևորել հայ արեստով ու գրականութեամբ, մեր սքանչելի ժողովրդի մտքի ու բազուկի, նրա անշէջ լոյսի պէս դարեր ու դարեր վառուող հանճարի ստեղծագործած արգասիքներով»⁵:

Ազգային դիմագծի պաշտպանության և հարստացման առումով նույնքան կարևոր ազդակ էր համարվում պատմությունը, որպեսզի ներկան ու ապագան «առողջ ու հաստատուն» հիմքերի վրա դրվի: Նշյալ տեսակետից հայ մտավորականության կատարելիք աշխատանքը Ս. Վրացյանը գնահատում էր «չափազանց մեծ» և մանավանդ՝ նորագույն շրջանի պատմության ուսումնասիրությունը համարում էր «ՎԷՄ»-ի «զբաղումի գլխաւոր առարկան»⁶:

² «ՎԷՄ», Ա. տարի, թ. 1, 1933, սեպտեմբեր-հոկտեմբեր, Ա., էջ 1:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, էջ 2:

⁵ Նույն տեղում:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 3:

Նկատի առնելով բաժանորդագրության կարևորությունը հանդեսի գոյության շարունակականության համար՝ խմբագրությունը տարբեր երկրներում համապատասխան գործակալներ էր նշանակել: Ներկայացնենք նրանց առաջին կազմը. Ֆրանսիա՝ Լ. Գեռնյան, Հունաստան՝ «Նոր Օր», Կիպրոս՝ Ա. Մահտեսյան, Բուլղարիա՝ Հ. Տեվեճյան, Պարսկաստան՝ Խ. Մելքունյան, Հ. Մուրադյան, Վ. Հովհաննիսյան, Ռումինիա՝ Ե. Սարգսյան, Եգիպտոս՝ Գ. Մխիթարյան («Հուսաբեր»), Սիրիա՝ Հ. Սիմոնի, Հ. Ապաճյան, Ս. Պոյաճյան, Իրաք՝ Մ. Սոսոյան, Հարավային Ամերիկա՝ «Արմենիա»: Հավելենք, որ գործակալների աշխարհագրությունն ու կազմը ժամանակի ընթացքում փոփոխվել է: Հանդեսի բաժանորդագրությունը տարեկան չէր, այլ ըստ վեց համարի:

Վերոնշյալի հետ կապված հետաքրքիր է նաև առաջին տարեշրջանի ավարտին՝ 1934թ. սեպտեմբերի 1-ին, «Վեմ»-ի բաժանորդագրության թվական ցուցանիշները. Ֆրանսիա – 165, Սիրիա – 98, Իրան – 82, Հյուսիսային Ամերիկա – 62, Ռումինիա – 50, Հարավային Ամերիկա – 31, Բուլղարիա – 26, Եգիպտոս – 26, Իրաք – 20, Կիպրոս – 18, Հունաստան – 18, Պաղեստին – 10, Սուդան – 6, Հաբեշտան – 6, Հնդկաստան – 2, Կուրա – 2, Շվեյցարիա – 1, Լեհաստան – 1, Անգլիա – 1, Գերմանիա – 1, Անդրհորդանան – 1, Կոնգո – 1, ընդհանուր – 631, հատվածաճառ – 90: Այս քանակը չէր ընդգրկում մամուլին և աշխատակիցներին ուղարկված համարները⁷:

Հանդեսի կենսագործունեությունն ապահովելու տեսանկյունից ցավալի փաստ էր բաժանորդագրի վճարման պարբերական ուշացումները, ինչի մասին խմբագրությունը ստիպված էր մշտապես համապատասխան հիշեցումներ տպագրել⁸: Հարկավ, այս նույն մտահոգությունը հայ պարբերականների անբաժան ուղեկիցն էր և է՝ նաև այժմ:

Հենց այդ «ցավն» էր պատճառը, որ 1938թ. ավարտին խմբագրությունը ճարահատյալ հերթական անգամ հետևյալ հորդորն էր ուղղում ընթերցողներին. «Պէտք է խոստովանել, որ հեշտ չէր մեր անցած ճամբան: Մանաւանդ վերջին տարիների նիւթական ծանր պայմաններում «Վեմ»-ը շատ դժուարութիւններ կրեց, բայց այն ջերմ համակրանքն ու սէրը, որ նա գտաւ ընթերցողների և հայ մշակոյթով ապրող մտատրականութեան կողմից, մոռացնել են տալիս ամէն գրկանք ու ներդրօին: Պէտք է ասենք նաև, որ բարոյական տեսակէտից մենք կատարելապէս գոհ ենք «Վեմ»-ից, նա իր շուրջ համախմբեց և ունի մեր մտատրականութեան ընտրանին և ընթերցողների լայն շրջաններ: Սէկ խնդիր – ժամանակին ուղարկեն իրենց բաժնեգինը»⁹: Խմբագրությունն անգամ պարբերաբար հանդեսի էջերում տպագրում էր տարբեր անհատների ու հաստատությունների «Վեմ»-ի համարներ նվիրողների անունները¹⁰:

⁷ Տե՛ս Բ. տարի, 1934, ք. 4, 1934, յուլիս-օգոստոս, Զ., էջ 139-142:

⁸ Տե՛ս Գ. տարի, 1935, ք. 1, յունուար-ապրիլ, Թ., էջ 126; Գ. տարի, 1935, ք. 3, յուլիս-օգոստոս, էջ 127; Դ. տարի, 1936, ք. 2, մարտ-ապրիլ, ԺԲ., էջ 126; Դ. տարի, 1936, ք. 3, յուլիս-հոկտեմբեր, ԺԶ., էջ 117; Դ. տարի, 1936, ք. 5, նոյեմբեր-դեկտեմբեր, ԺԷ., էջ 118; Ե. տարի, 1937, ք. 1, յունուար-մարտ, ԺԸ., էջ 109:

⁹ Տե՛ս Զ. տարի, 1938, ք. 4, հոկտեմբեր-դեկտեմբեր, ԻԴ., էջ 109-110:

¹⁰ Տե՛ս մանրամասն՝ Ա. տարի, 1933, ք. 2, նոյեմբեր-դեկտեմբեր, Բ., էջ 151; Բ. տարի, 1934, ք. 1, նոյեմբեր-դեկտեմբեր, Գ., էջ 142; Բ. տարի, 1934, ք. 6, նոյեմբեր-դեկտեմբեր, Ը., էջ 133; Գ. տարի, 1935, ք. 1, յունուար-ապրիլ, Թ., էջ 126; Գ. տարի, 1935, ք. 2, մայիս-յունիս, էջ 125; Գ. տարի, 1935, ք. 3, յուլիս-օգոստոս, էջ 127; Դ. տարի, 1936, ք. 1, յունուար-փետրուար, ԺԳ., էջ 126; Դ. տարի, 1936, ք. 3, յուլիս-հոկտեմբեր, ԺԶ., էջ 117; Դ. տարի, 1936, ք. 5, նոյեմբեր-դեկտեմբեր, ԺԷ., էջ 119; Ե. տարի, 1937, ք. 3, յուլիս-հոկտեմբեր, Ի., էջ 118; Զ. տարի, 1938, ք. 4, հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 111:

Եվ ի՞նչ, արդյոք այդ ամենը տալիս էր ցանկալի արդյունք: Ստիպված ենք փաստել հակառակը և այդ առիթով հարկ ենք համարում մեջբերել հանդեսի հերթական խմբագրականից մի քանի խոսույն հատվածներ, քանզի դրանք ունեն նաև արդիական հնչեղություն. «Յայտնի է արդէն, որ վարդ ու շուշաններ չեն ցանուած հայ գրականութեան ճանապարհին, և, բնականաբար, «Վէմ»-ն էլ զերծ չեղաւ հայ մամուլին վերապահուած բարոյական, բայց, մանաւանդ, նիւթական դժուարութիւններից»:

«Վէմ»-ը հիւրընկալ ասպարէզ է, առանց դիրքի ու դաւանանքի խտրութեան, հայ գրչի բոլոր մշակների համար, որոնք անշահախնդիր սիրով նուիրուած են և կամենում են ծառայել հայ մշակոյթին և հայ անցեալի ուսումնասիրման գործին»:

«Ջարմանալի բան. հայ մարդը, որ գործնական կեանքի բոլոր ասպարէզներում ճանաչուած է իբրև պարտաճանաչ վճարող և ուրիշի սեփականութիւնը յարգող, հայերէն գրքի ու թերթի համար դրամ վճարել չի սիրում և հրատարակչից ու խմբագրից իւրացրած դրամը գողութիւն չի համարում: Հայ մարդը ամէն բանի համար դրամ չի խնայի, բայց երբ հերթը հայ գրքին ու թերթին գայ, հազար տեսակ հնարամտութեան կը դիմէ, պարտականութիւնից խուսափելու համար: Հայ հրատարակչի ու խմբագրի դրամը իւրացները, կարծես, բնական և արդար է համարվում»:

«Վերջին հաշուով, հայ գիրքն ու մամուլը պահողը, նրանց նիւթական միջոց հայթայթողն էլ, այսպէս կոչուած «հասարակ ժողովուրդն» է՝ հայ աշխատատուրը՝ արհեստատուրը, բանուորը, առևտրականը, նա, որ քրտինքով է ապրում և յարգանք ունի դէպի ուրիշի աշխատանքը: «Վէմ»-ի շուրջ 700 վճարող բաժանորդների շարքում մատի վրա են հաշուում մտաւորականներն ու հարուստները – բոլորը գրեթէ աշխատատուր մարդիկ են: Սրանց անվերապահ քրտինքով է ապրել «Վէմ»-ը մինչև այժմ: Սրանց վրա է մեր յոյսը և ապագայում¹¹»:

* * *

«Վէմ»-ն ունեցել է հետևյալ կառուցվածքը. 1. Խմբագրականներ, 2. Հոդվածներ, 3. Հին թուղթեր, 4. Նոր թուղթեր, 5. Անցյալը, 6. Կյանք և մշակույթ, 7. Գիրք և մամուլ, 8. Գրախոսական: Բազմազան էր հանդեսի հետաքրքրությունների շրջանակը: Առկա հոդվածներն ու վավերագրերի հրատարակումներն արտացոլում էին ՀՅԴ ու նրա գործիչների (հուշեր, նամակներ), հայկական հարցի, հայ ազգային-ազատագրական պայքարի, Մեծ եղեռնի, Առաջին աշխարհամարտի պատմությունը: Կարևոր տեղ էր հատկացվել Հայաստանյայց եկեղեցու պատմությանը, հայագիտության առանձին ճյուղերի՝ գրականագիտության (Ֆիրդուսի, Քուչակ, Սայաթ Նովա, Բաֆֆի, Թումանյան, Շիրվանզադե և այլք), թատերագիտության, ճարտարապետության, երաժշտագիտության (Կոմիտաս), տպագրության պատմության ուսումնասիրությանը: Տեղեկատվություն էր տրվում սփյուռքահայ գաղթօջախների, Խորհրդային Հայաստանի կյանքի, մամուլի և գրքերի, հանդեսի հրատարակման տարիներին վախճանված գործիչների վերաբերյալ (ընդ որում՝ նրանցից մի մասի վերաբերյալ մնալով միակ աղբյուրը):

Հավելվածի տեսքով հանդեսի էջերում հրատարակվել են Վահրամ Եպիսկոպոս Մանկունու «Գէորգ Դ. և իւր ժամանակը (1812-1882)» և Գիւտ Մխիթարեանի «Պրագիլահայ գաղութը. Սկիզբէն մինչև մեր օրերը» աշխատությունները:

¹¹ Ե. տարի, 1937, ք. 1, յունուար-մարտ, էջ 1-3:

«ՎԷՄ»-ում հրատարակվել է ընդհանուր առմամբ 409 միավոր նյութ (այդ թվում՝ 108 հոդված, 56 գրախոսական), ինչը նրա կարճատև գոյության համար արդեն խոսուն թիվ է: Առանձնակի հիշատակության է արժանի հանդեսի պատկերազարդ լինելու պարագան՝ հրապարակվել են 63 լուսանկարներ, որոնց մեծ մասի առումով «ՎԷՄ»-ը կրկին շարունակում է մնալ միակ աղբյուրը:

«ՎԷՄ»-ին աշխատակցել են մշակոյթի, գիտության և ազգային-քաղաքական կյանքի նշանավոր գործիչներ Ն. Ադոնցը, Ն. Աղբալյանը, Ա. Աստվածատրյանը, Ռ. Բերբերյանը, Գ. Գյոզալյանը, Ա. Գյուլխանդանյանը, Դրաստամատ Կանայանը, Հ. Չավրյանը, Վ. Թորգոմյանը, Հ. Իրազեկը (Տեր-Հակոբյան), Ա. Խոնդկարյանը, Վ. Մինախորյանը, Շ. Նարդունին, Ա. Ջամալյանը, Արմեն Սևանը (Հովհաննես Տէվէճյան), Հ. Սիրունին, Վ. Փափազյանը, Հ. Քյուրտյանը: Բնականաբար, հանդեսի գլխավոր հեղինակը հենց ինքը՝ խմբագիր Սիմոն Վրացյանն էր:

Հանդեսի մատենագիտությունը կազմել ենք ըստ նրա կառուցվածքային բաժանումների՝ այբբենական սկզբունքով: Հեղինակ չունեցող նյութերը մեծ հավանականությամբ պատկանում են Ս. Վրացյանի գրչին: Ուղիղ փակագծերի և տողատակերի ծանոթություն-հավելումները մերն են: Մնացածը հրապարակվում է՝ պահպանելով հանդեսի 1930-ականների ուղղագրությունը:

Ավարտելով ներածականը, հավելենք, որ «ՎԷՄ»-ի վերջին թվահամարն ունի մատենագիտական հետևյալ տվյալները. «1939, Ձ. տարի, թիւ 5, յունուար-մարտ, ԻԵ., [80 էջ]: Մինչդեռ, նախորդ համարն ուներ հետևյալ պատկերը. «1938, Ձ. տարի, թիւ 4, հոկտեմբեր-դեկտեմբեր, ԻԴ.»»: Այսինքն՝ ըստ մամուլի հրատարակման և մատենագիտության կանոնների նոր համարը պետք է լիներ «Է. տարի, թիվ 1» (6 համարանոց տարեշրջանի սկզբունքը մինչ այդ արդեն խախտվել էր): Մակայն, Ս. Վրացյանը պահպանել է 1938թ. համարների շարունակականությունը, բայց մյուս կողմից էլ վերջին համարը կիսատ է մնացել, ինչն ապացույց է, որ Ս. Վրացյանը հանդեսի հրատարակությունը դադարեցնելու վերջնական նպատակ չի ունեցել, հակառակ դեպքում՝ համապատասխան խմբագրականով այդ մասին կձանուցեր ընթերցողներին:

Այսինքն, «ՎԷՄ»-ի հրատարակումը կիսատ է մնացել, ուստի այսօր՝ նրա մատենագիտության ներկայացումով, ամփոփում ենք 1930-ականներին արված մեծ գործը՝ ակնկալելով Սիմոն Վրացյանի կարևոր առաքելության շարունակությունը:

Ա. Հ.

APPENDIX
“VEM” TWO-MONTHLY MAGAZINE
OF CULTURE AND HISTORY

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

1. **Խմբ.**, [Զրատարակության նպատակները], Ա. տարի, 1933, ք. 1, սեպտեմբեր-հոկտեմբեր, Ա., էջ 1-4
2. **Խմբ.** «Վեմ»-ի, **Երրորդ տարեշրջանի շենքին**, Դ. տարի, 1935, ք. 4, սեպտեմբեր-դեկտեմբեր, էջ 124-125
3. **Խմբագրութեան կողմից**, [առաջին տարեշրջանի ամփոփում], Բ. տարի, 1934, ք. 4, յուլիս-օգոստոս, Ջ., էջ 139-142
4. **Խմբագրութեան կողմից**, [տարեշրջանի ամփոփում], Ջ. տարի, 1938, ք. 4, հոկտեմբեր-դեկտեմբեր, ԻԴ., էջ 109-110
5. **Խմբագրութիւն, Բաժանորդագրութեան նոր շրջանի շենքին**, [անցած ուղու գնահատում], Ե. տարի, 1937, ք. 1, յունուար-մարտ, ԺԸ., էջ 1-3
6. «Յայտարարութիւններ», [հայկական պարբերականների ազդերի հասցեներով], Ա. տարի, 1933, ք. 1, սեպտեմբեր-հոկտեմբեր, Ա., էջ 158-159; Բ. տարի, 1934, ք. 1, նոյեմբեր-դեկտեմբեր, Գ., էջ 142; Բ. տարի, 1934, ք. 3, մայիս-յունիս, Ե., էջ 110-111; Բ. տարի, 1934, ք. 4, յուլիս-օգոստոս, Ջ., էջ 143; Բ. տարի, 1934, ք. 5, սեպտեմբեր-հոկտեմբեր, Է., էջ 142-143; Բ. տարի, 1934, ք. 6, նոյեմբեր-դեկտեմբեր, Ը., էջ 134-135; Գ. տարի, 1935, ք. 1, յունուար-ապրիլ, Թ., էջ 126-127; Գ. տարի, 1935, ք. 2, մայիս-յունիս, Ժ., էջ 126-127; Դ. տարի, 1935, ք. 4, սեպտեմբեր-դեկտեմբեր, ԺԲ., էջ 126-127; Դ. տարի, 1936, ք. 1, յունուար-փետրուար, ԺԳ., էջ 127; Դ. տարի, 1936,

- ք. 2, մարտ-ապրիլ, ԺԴ., էջ 127; Դ. տարի, 1936, ք. 3, մայիս-յունիս, ԺԵ., էջ 126-127; Դ. տարի, 1936, ք. 3, յուլիս-հոկտեմբեր, ԺԶ., էջ 119; Դ. տարի, 1936, ք. 5, նոյեմբեր-դեկտեմբեր, ԺԷ., էջ 119; Ե. տարի, 1937, ք. 1, յունուար-մարտ, ԺԸ., էջ 110-111; Ե. տարի, 1937, ք. 2, ապրիլ-յունիս, ԺԹ., էջ 111
7. **Ստացուած հրատարակութիւններ**, Ա. տարի, 1933, ք. 2, նոյեմբեր-դեկտեմբեր, Բ., էջ 151; Բ. տարի, 1934, ք. 1, նոյեմբեր-դեկտեմբեր, Գ., էջ 142; Բ. տարի, 1934, ք. 2, մարտ-ապրիլ, Դ., էջ 143; Բ. տարի, 1934, ք. 3, մայիս-յունիս, Ե., էջ 110; Բ. տարի, 1934, ք. 4, յուլիս-օգոստոս, Ջ., էջ 142; Բ. տարի, 1934, ք. 5, սեպտեմբեր-հոկտեմբեր, Է., էջ 141; Բ. տարի, 1934, ք. 6, նոյեմբեր-դեկտեմբեր, Ը., էջ 133; Գ. տարի, 1935, ք. 2, մայիս-յունիս, Ժ., էջ 125; Գ. տարի, 1935, ք. 3, յուլիս-օգոստոս, ԺԱ., էջ 127; Դ. տարի, 1935, ք. 4, սեպտեմբեր-դեկտեմբեր, ԺԲ., էջ 123; Դ. տարի, 1936, ք. 1, յունուար-փետրուար, ԺԳ., էջ 126; Դ. տարի, 1936, ք. 2, մարտ-ապրիլ, ԺԴ., էջ 126; Դ. տարի, 1936, ք. 3, մայիս-յունիս, ԺԵ., էջ 125; Դ. տարի, 1936, ք. 3, յուլիս-հոկտեմբեր, ԺԶ., էջ 118; Դ. տարի, 1936, ք. 5, նոյեմբեր-դեկտեմբեր, ԺԷ., էջ 118; Ե. տարի, 1937, ք. 1, յունուար-մարտ, ԺԸ., էջ 109; Ե. տարի, 1937, ք. 2, ապրիլ-յունիս, ԺԹ., էջ 110; Ե. տարի, 1937, ք. 3, յուլիս-հոկտեմբեր, Ի., էջ 119; Զ. տարի, 1938, ք. 2, յունուար-մայիս, ԻԲ., էջ 110-111; Զ. տարի, 1938, ք. 3, յունիս-սեպտեմբեր, ԻԳ., էջ 106; Զ. տարի, 1938, ք. 4, հոկտեմբեր-դեկտեմբեր, ԻԴ., էջ 111
8. «Վեմ» **Մուկորդներ**, Ա. տարի, 1933, ք. 2, նոյեմբեր-դեկտեմբեր, Բ., էջ 151; Բ. տարի, 1934, ք. 1, նոյեմբեր-դեկտեմբեր, Գ., էջ 142; Բ. տարի,

1934, ք. 6, նոյեմբեր-դեկտեմբեր, Ը., էջ 133; Գ. տարի, 1935, ք. 1, յունուար-ապրիլ, Թ., էջ 126; Գ. տարի, 1935, ք. 2, մայիս-յունիս, էջ 125; Գ. տարի, 1935, ք. 3, յուլիս-օգոստոս, էջ 127; Դ. տարի, 1936, ք. 1, յունուար-փետրուար, ԺԳ., էջ 126; Դ. տարի, 1936, ք. 3, յուլիս-հոկտեմբեր, ԺԶ., էջ 117; Դ. տարի, 1936, ք. 5, նոյեմբեր-դեկտեմբեր, ԺԷ., էջ 119; Ե. տարի, 1937, ք. 3, յուլիս-հոկտեմբեր, Ի., էջ 118; Զ. տարի, 1938, ք. 4, հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 111

9. «Վեմ»-ի Վարչութիւն, Խմբագրութեան կողմից, [գործընկերներին և բաժանորդներին, որ ուղարկեն բաժանորդագիրը], Գ. տարի, 1935, ք. 1, յունուար-ապրիլ, Թ., էջ 126; Գ. տարի, 1935, ք. 3, յուլիս-օգոստոս, էջ 127; Դ. տարի, 1936, ք. 2, մարտ-ապրիլ, ԺԴ., էջ 126; Դ. տարի, 1936, ք. 3, յուլիս-հոկտեմբեր, ԺԶ., էջ 117; Դ. տարի, 1936, ք. 5, նոյեմբեր-դեկտեմբեր, ԺԷ., էջ 118; Ե. տարի, 1937, ք. 1, յունուար-մարտ, ԺԸ., էջ 109

ՀՈՒՎԱԾՆԵՐ

10. Ա. Ա. [Աբեղյան Արտաշէս], *Լեւան Չաուպտ*, [Բեռլինից], [իսլայտի արևելագետ Կարլ Լեհման-Չաուպտի կենսագրությունը], Զ. տարի, 1938, ք. 4, հոկտեմբեր-դեկտեմբեր, ԻԴ., էջ 83-85

11. Աբեղեան Արտաշէս, Դորպատի համալսարանը, Բ. տարի, 1934, ք. 6, նոյեմբեր-դեկտեմբեր, Ը., էջ 15-22

12. Աբեղեան Արտաշէս, Հայագիտութիւնը յետպատերազմեան Գերմանիայում, Ա. տարի, 1933, ք. 2, նոյեմբեր-դեկտեմբեր, Բ., էջ 55-67

13. Աբեղեան Արտաշէս, Հայեթիւրք վաւերաթղթեր, [միջազգային դիվանագիտական], Դ. տարի, 1936, ք. 1, յունուար-փետրուար, ԺԳ., էջ 12-24

14. Աբեղեան Արտաշէս, Միջազգային դաշնագիրներ Հայաստանի մասին, [1801թ.-ից մինչև 1878թ., պայմանագրերից հայերի մասին հողվածների տեքստերով], Ե. տարի, 1937, ք. 1, յունուար-մարտ, ԺԸ., էջ 4-15; [1912-1917թթ.], Ե. տարի, 1937, ք. 3, յուլիս-հոկտեմբեր, Ի., էջ 79-89; [1917թ. Ռուսաստանի ազգությունների իրավունքների մասին հռչակագրից մինչև Բրեստի պայմանագիր, Վրաստանի անկախության հռչակագիր, Բաթումի 1918թ. վրաց-թուրքական պայմանագիր], Զ. տարի, 1938, ք. 1, նոյեմբեր-յունուար, ԻԱ., էջ 75-87; [1918թ. օգոստոսի 27-ի Բեռլինի գերմանա-խորհրդային պայմանագիր, Մուդրոսի զինադադար, 1919թ. օգոստոսի 9-ի անգլո-պարսկական համաձայնագիր, Խորհրդային Ռուսաստանի՝ Թուրքիային և Պարսկաստանին ուղղված կոչելը], Զ. տարի, 1938, ք. 4, հոկտեմբեր-դեկտեմբեր, ԻԴ., էջ 27-37

15. Աբրահամեան Ռուբեն, Շահնամեն եւ չինական վէպը, Գ. տարի, 1935, ք. 3, յուլիս-օգոստոս, ԺԱ., էջ 52-59

16. Աբրահամեան Ռուբեն, Ֆերդուսին եւ իր Շահնամեն (Օճնդեան հազարամեակի առթիւ), Բ. տարի, 1934, ք. 5, սեպտեմբեր-հոկտեմբեր, Է., էջ 20-29

17. Ակադ. Ն. Մառի ինքնակենսագրութիւնը, [արտատպություն Մոսկվայի «Օգոնյոկ» շաբաթաթերթի 1927թ. հուլիս, ք. 27 համարից], Գ. տարի, 1935, ք. 1, յունուար-ապրիլ, Թ., էջ 35-44

18. Աղբալեան Նիկոլ, Ստաժումներ ազգի եւ դաւանանքի մասին, [Բեյրութից], Զ. տարի, 1938, ք. 2, յունուար-մայիս, ԻԲ., էջ 1-7

19. Աճեմեան Հայկ, Բագրատ Վարդ. Գերդ-Թաւաքալեան, Դ. տարի, 1936, ք. 1, յունուար-փետրուար, ԺԳ., էջ 25-36; Դ. տարի, 1936, ք. 2, մարտ-ապրիլ, ԺԴ., էջ 96-108

20. Անդրէ Սանդէլտամ, [«Բրեննի մրցանակ» հատկացնելու մասին, կենսագրությունը, միջազգային իրավունքի և հայկական հարցի մասին գրքերի տեսությունը], Գ. տարի, 1935, ք. 1, յունուար-ապրիլ, Թ., էջ 1-3

21. Աջեան, Ինչո՞ւ միացանք Իթթիհատի հետ, Բ. տարի, 1934, ք. 1, յունուար-փետրուար, Գ., էջ 122-124

22. Աստուածատրեան Արշալոյս, Արամը (Յուշեր եւ տպաւորութիւններ), Բ. տարի, 1934, ք. 6, նոյեմբեր-դեկտեմբեր, Ը., էջ 23-35; Գ. տարի, 1935, ք. 1, յունուար-ապրիլ, Թ., էջ 57-71

23. Աւալով Զ. Պրոֆ., Բաթումի խորհրդածոդովը [կա խմբագրության ներածական, «Վրաստանի անկախությունը 1918-1921թթ. միջազգային քաղաքականության մեջ» գրքից թարգմանել է «Վեմ»-ի աշխատակից Ա. Արշակունին], Բ. տարի, 1934, ք. 2, մարտ-ապրիլ, Դ., էջ 80-93; Բ. տարի, 1934, ք. 3, մայիս-յունիս, Ե., էջ 74-84; Բ. տարի, 1934, ք. 4, յուլիս-օգոստոս, Զ., էջ 104-112

24. Արամ [Մանուկյան], *Բեկորներ օրագրից* [կա խմբագրության ներածական, օրագիրը սկսել է շարադրել վան մտնելուց հետո, այն կիսատ է, պահպանվում է ՀՀԴ Դիվանում], Զ. տարի, 1939, ք. 5, յունուար-մարտ, ԻԵ., էջ 1-10

25. Արդութեան Յովսէփ, Յովնան Դաւթեան (Յուշեր անցեալից), [արտատպություն Թիֆլիսի «Հորիզոն» թերթի 1918թ. սեպտեմբերի 1-ի համարից], Զ. տարի, 1938, ք. 3, յունիս-սեպտեմբեր, էջ 87-92

26. Բալուեան Հրանդ, Միսաք Սեծարենց (1886-1908), Բ. տարի, 1934, ք. 2, մարտ-ապրիլ, Դ., էջ 21-40

27. Բաղդասարեան Տիգրան Գնդ., Վանի

երկրորդ կռիւները եւ վերջին իշխանութիւնը (Ջինուորականի մը յուշերը)¹², I. Դէպի Վան.- Յուշեր կռիւի եւ սարսափի օրերէն.- Տէրմէն եւ ռամկավարներու իշխանութիւնը.- Կազմակերպական եւ զանազան աշխատանքներ.- Հայոց Ձորի տեղադրումը.- Բիթլիսի վտանգը.- Դէպի Շատախ, 2. տարի, 1938, թ. 3, յունիս-սեպտեմբեր, ԻԳ., էջ 11-28; II. Նոր ուժերու ժամանում.- Սեբաստացի Մուրատ.- Վերաշինութիւն եւ տեղադրում.- Սեր նոր գիծը՝ Կերտնոնաշտ եւ Փեսանդաշտ.- Հետագոտութիւն դէպի Շատախ եւ Սոկս.- Սեր նախկին դիրքերը.- Դաշնակց. Շրջանային ժողով.- Սոկսի հետագոտութիւնը եւ Ծափանցի կռիւը, 2. տարի, 1938, թ. 4, հոկտեմբեր-դեկտեմբեր, ԻԳ., էջ 38-50; III. Ջինուորական Մարմնի ընտրութիւն.- Դէպի Գաւաշ եւ Կարճկան.- Լեռներու աշխարհ.- Ամալութիւն եւ աւերակներ.- Աղթամարի խորհրդակցութիւնը.- Նորէն նահանջ.- Ռուսական խաղեր ու դաւեր.- Նահանջ մինչեւ ճանիկ.- Կրկին վերադարձ, [կիսատ է մնացել, պետք է ավարտվեր հաջորդ համարում], 2. տարի, 1939, թ. 5, յունուար-մարտ, ԻԵ., էջ 57-70

28. Բերբերեան Ռուբէն, Ս. Նալբանդեանցի անտիպ երկերը, [Փարիզից], Դ. տարի, 1936, թ. 2, մարտ-ապրիլ, ԺԴ., էջ 38-65

29. Բերբերեան Ռուբէն, Նոր-Նախիջեանի անցեալն ու ներկան, Բ. տարի, 1934, թ. 1, յունուար-փետրուար, Գ., էջ 1-16

30. Բերբերեան Ռուբէն, Պատրանքների շրջանից, I. Ե. տարի, 1934, թ. 3, յուլիս-հոկտեմբեր, Ի., էջ 1-18; II., [Հնչակյաններ-Նազարբեկ], 2. տարի, 1938, թ. 1, նոյեմբեր-յունուար, ԻԱ., էջ 11-30; III. Համբարձում Պոյաճեան (Մուրատ), բժ. Լոռիս-Սելիքով, 2. տարի, 1938, թ. 2, յունուար-մայիս, ԻԲ., էջ 8-28; IV. Տիկ. Անուշի նուիրած զենքերը եւ Աթրու Օհանջանեանը, V. Նազարբեկեան ամուլը, VI. Կառնակերպական աշխատանք ռուսահայ քաղաքներում, 2. տարի, 1938, թ. 3, յունիս-սեպտեմբեր, ԻԳ., էջ 29-57; VII. Վերադարձ ժընեւ, Ռ. Խանազատ, Կաթողիկոսական քեկնածուի հարցը մամուլում, Ընկերվարական առաջին գրքուկների հրատարակութիւնը, VIII. Հնչակի կենտրոնը Աթենք է տեղափոխվում, Ծրագիր՝ կապեր հաստատելու եւրոպական ընկերվարական կուսակցութիւնների հետ, 2. տարի, 1938, թ. 4, հոկտեմբեր-դեկտեմբեր, ԻԴ., էջ 69-78; IX. Եւրոպական հանրային կարծիքի պատրաստութեան փորձեր եւ ընկերվարական կուսակցութիւնների աջակցութիւնը.- Սեծ պետութիւնները անվերապահ պաշտպան թիւրքիայի.- Ահաբեկչութեան ծրագիր.- Աթենք.- Գործելակերպի տարբեր կարծիքներ եւ վեճեր.- Գործերը Աթենքում, [կիսատ է մնացել, պետք է ավարտվեր հաջորդ համարում], 2.

տարի, 1939, թ. 5, յունուար-մարտ, ԻԵ., էջ 41-56

31. Բերբերեան Ռուբէն, Ռ. Պատկանեանի անտիպ նամակները [կա 1875թ. հունիսի 15-ին Տեր Խաչատուրին ուղղված նամակը, 1879թ. նոյեմբերի 3-ին և 22-ին, 1880թ. հունվարի 5-ին, 7-ին, մայիսի 5-ին Վահրամ եպիսկոպոս Մանկունուն գրած նամակներ, որոնք գլխավորապես վերաբերում են Նոր-Նախիջեանի Հոգևոր Դպրոցի, հոգաբարձության և դպրոցական տպարանի գործունեությանը, գտնվում են Փարիզի Նուբարյան Մատենադարանում, տրամադրել է Արամ Անտոնյանը], Ա. տարի, 1933, թ. 1, սեպտեմբեր-հոկտեմբեր, Ա., էջ 39-52

32. Գասպարեան Աշոտ Դոկտ., Լեօն իբրեւ պատմագիր, Գ. տարի, 1935, թ. 3, յուլիս-օգոստոս, ԺԱ., էջ 33-51

33. Գիւզալեան Գ., Ս. Փորթուզալեան (Մի էջ յեղափոխական մտքի պատմութիւնից), [Բեյրութից], Դ. տարի, 1936, թ. 3, յուլիս-հոկտեմբեր, ԺԶ., էջ 1-29

34. Գիւզալեան Գառնիկ, Սեծ յոբելեանի առթիւ, Քրիստոնէութեան եւ լեզուի դերը հայութեան կառուցման մէջ [Աստվածաշնչի հայերեն թարգմանության 1500-ամյակի առթիվ], Դ. տարի, 1936, թ. 2, մարտ-ապրիլ, ԺԴ., էջ 1-11; Դ. տարի, 1936, թ. 3, մայիս-յունիս, ԺԵ., էջ 25-37

35. Գիւլխանդանեան Աբր. [ահամ], Օգոստոս հինգը [1918] (Մի էջ Բագուի հերոսամարտից), [Փարիզից], Ա. տարի, 1933, թ. 2, նոյեմբեր-դեկտեմբեր, Բ., էջ 108-121

36. Գր. Արծրունու յուղարկաւորութիւնը եւ Ս. Զաւարեանի դամբանականը, Բ. տարի, 1934, թ. 5, սեպտեմբեր-հոկտեմբեր, Է., էջ 105-108

37. Գրիմիթէլ [Թելլայան Գրիգոր], **Ջինադադարի օրերում**, I. Դատական գործը Պոլսոյ մէջ, II. Դատական գործը Կիլիկիոյ մէջ, [Փարիզից], Բ. տարի, 1934, թ. 5, սեպտեմբեր-հոկտեմբեր, Է., էջ 86-91

38. Դերասան Յովհաննէս Զարիֆեան (1879թ. մարտ 23-1937թ. յուլիս 9), [Հ. Զարիֆյանի ինքնակենսագրությունը Բուենոս-Այրեսում գրի է առել Ս. Վրացյանը], Ե. տարի, 1934, թ. 3, յուլիս-հոկտեմբեր, Ի., էջ 45-58

39. Դեւոյեանց Տիգրան, Հետախոյզի մը յուշերը (Պատասխան իմ քննադատներուն), [1914-1915թթ. դէպքեր], [Սյու-Յորքից], 2. տարի, 1938, թ. 2, յունուար-մայիս, ԻԲ., էջ 48-54; 2. տարի, 1938, թ. 3, յունիս-սեպտեմբեր, ԻԳ., էջ 58-72

40. Դիլ Շառլ, Հայկական ճարտարապետութիւնը, Դ. տարի, 1936, թ. 2, 1936, մարտ-ապրիլ, ԺԴ., էջ 17-23

41. Դրօ, Մի հատուած յուշերից, I. Զարկ, Երեւան ջան, II. Առաջին հանդիպումս Դումանի հետ,

¹² Տպվում է որպէս Հմ. Մանուկյանի հուշերի շարունակությունը 1939-ում, սկսվում է 1916թ. փետրվարից, կիսատ է մնացել:

Բ. տարի, 1934, ք. 3, մայիս-յունիս, Ե., էջ 1-17; III. Դարալագեագի լեռներում, IV. Լեռնային Նախի-ջեւանում, Բ. տարի, 1934, ք. 6, նոյեմբեր-դեկտեմբեր, Ը., էջ 1-14; V. Միսեան գիւղի կռիւը, Գ. տարի, 1935, ք. 2, մայիս-յունիս, էջ 45-54

42. Չարեան Յովհաննէս, Գարբիէլ Սունդուկեան (Կեանքն ու գործը), I. Ընդհանուր վիճակ, II. Մարդը, III. Գործը, IV. Սունդուկեանի ստեղծագործութեան ակունքները, V. Սունդուկեանի լեզուն, VI. Սունդուկեանը վրաց մօտ, VII. Սունդուկեանի ներքին կեանքը, [կա Գ. Սունդուկեանի «Կտակ. Իմ մահն ու թաղումը»-ի տեքստը], Դ. տարի, 1936, ք. 5, նոյեմբեր-դեկտեմբեր, ԺԷ., էջ 1-23

43. Չարեան Յովհաննէս, Թիֆլիսի բարբառի վնասարարները, Բ. տարի, 1934, ք. 6, նոյեմբեր-դեկտեմբեր, Ը., էջ 36-44

44. Չարեան Յովհաննէս, Թորոս Թորամանեանի կեանքն ու գործը, Բ. տարի, 1934, ք. 5, սեպտեմբեր-հոկտեմբեր, Է., էջ 30-40

45. Չարեան Յովհաննէս, Կովկասի մշակութային պատմութիւնը, [Ն. Մառի 1915թ. տպւած «Կովկասի մշակութային աշխարհն ու Հայաստանը» աշխատության ներկայացում «Վէճ»-ի խմբագրության հանձնարարությամբ], Գ. տարի, 1935, ք. 2, մայիս-յունիս, Ժ., էջ 1-14

46. Չարեան Յովհաննէս, Հայաստանի մշակութային պատմութիւնը (Ըստ ակադ. Ն. Մառի), Գ. տարի, 1935, ք. 3, յուլիս-օգոստոս, ԺԱ., էջ 17-32

47. Չարեան Յովհաննէս, Պարսկաստանի յեղափոխութիւնը եւ Մելքոն խանը, [Պարսկաստանում մասոնական առաջին օթյակի հիմնադիրը], Դ. տարի, 1935, ք. 4, սեպտեմբեր-դեկտեմբեր, ԺԲ., էջ 14-29

48. Չարեան Յովհաննէս, Սայեաթ Նովա, I. Կենսագրութիւն եւ նոր աղբիւրներ, II. Ի՞նչ են աշուղները, III. Սայեաթ Նովայի կենսագրութեան աղբիւրները, IV. Սայեաթ Նովայի գրական ծածկանունը, Ա. տարի, 1933, ք. 1, սեպտեմբեր-հոկտեմբեր, Ա., էջ 28-38; V. Վրաստանի վիճակը Սայեաթ Նովայի ժամանակ, VI. Սայեաթ Նովայի ծագումը, VII. Սայեաթ Նովայի ընկերային վիճակը, VIII. Սայեաթ Նովայի ծննդեան թուականը, IX. Սայեաթ Նովայի կրթութիւնը, Ա. տարի, 1933, ք. 2, նոյեմբեր-դեկտեմբեր, Բ., էջ 32-46; X. Սայեաթ Նովայի հիմնական արհեստը, XI. Հայ աշուղները վրաց արքունիքում, XII. Սայեաթ Նովան պալատական աշուղ, Բ. տարի, 1934, ք. 1, նոյեմբեր-դեկտեմբեր, Գ., էջ 38-49; XIII. Սայեաթ Նովան ծաղրածու, XIV. Սայեաթ Նովան դեսպան, Բ. տարի, 1934, ք. 2, մարտ-ապրիլ, Դ., էջ 12-20; XV. Խզումը թագաւորի հետ, XVI. Սայեաթ Նովայի սիրահարութիւնը, XVII. Սայեաթ Նովան սիրահար, Բ. տարի, 1934, ք. 3, մայիս-յունիս, Ե., էջ 18-28; XVIII. Սայեաթ Նովայի եպիսկոպոսութեան խնդիրը, XIX. Սայեաթ Նովայի ընտա-

նիքը, XX. Սայեաթ Նովայի մահը, Բ. տարի, 1934, ք. 4, յուլիս-օգոստոս, Զ., էջ 38-53

49. Ընծայեցի¹³, Հայոց եկեղեցու միասնականութեան խնդիրը [կա խմբագրության ներածականը], Ե. տարի, 1937, ք. 2, ապրիլ-յունիս, ԺԹ., էջ 83-90

50. Թորգոմեան Վահրամ Յ. Տոթթ, Յուշատեսութեան, [Փարիզից], [Կա Ավ. Ահարոնյանի 1918թ. հոկտեմբերի 20-ի, Ա. Խատիսյանի 1918թ. հոկտեմբերի 31-ի մամակները նրան, ՀՀ պատվիրակության գործունեւթյունը Կ. Պոլսում], Դ. տարի, 1936, ք. 2, մարտ-ապրիլ, ԺԴ., էջ 12-16; Դ. տարի, 1936, ք. 3, մայիս-յունիս, ԺԵ., էջ 20-24; Դ. տարի, 1936, ք. 3, յուլիս-հոկտեմբեր, ԺԶ., էջ 54-58; Ե. տարի, 1937, ք. 1, յունուար-մարտ, ԺԸ., էջ 31-50; [Ս. Արքեպիսկոպոս Օրմանյան, պոլսահայության կյանք], Ե. տարի, 1937, ք. 2, ապրիլ-յունիս, ԺԹ., էջ 44-57; [Զավեն Պատրիարք Տեր-Եղիայան], Զ. տարի, 1938, ք. 1, նոյեմբեր-յունուար, Բ., էջ 57-74; [Յակոբ Քոչարյան, ՀՀ պատվիրակություն], Դ. տարի, 1936, ք. 3, մայիս-յունիս, Ը., էջ 20-24; [պոլսահայության կյանք, Ավ. Ահարոնյան], Զ. տարի, 1938, ք. 2, յունուար-մայիս, ԻԲ., էջ 29-47; [Վ. Փափազյան, Սրապիոն Թղյան, Մ. Պապաջանյան, Զավեն Պատրիարք, Լեո], Զ. տարի, 1938, ք. 4, հոկտեմբեր-դեկտեմբեր, ԻԴ., էջ 51-68

51. Թորոսեան Գրիգոր, Ղարա Մելիք (Յուշատեսութեան), Դ. տարի, 1936, ք. 5, նոյեմբեր-դեկտեմբեր, ԺԷ., էջ 70-79

52. Թորոսեան Հ. Ն., Տոթթ. Վալտեմառ Պէլք (Կեանքն ու գործերը), [Փարիզից], Զ. տարի, 1938, ք. 2, յունուար-մայիս, ԻԲ., էջ 55-63

53. Իրազէլ Յ. [Տեր-Հակոբյան Հակոբ], **Եւս մի հին թատերգութիւն** («Լէլի»), [Նոր Ջուղա-Սպահանից], Բ. տարի, 1934, ք. 4, յուլիս-օգոստոս, Ե., էջ 21-38

54. Իրազէլ Յ., Հայ անդրանիկ թատերգութիւնը («Խտրադիմայ դժոխութեան»), Ա. տարի, 1933, ք. 2, նոյեմբեր-դեկտեմբեր, Բ., էջ 1-18

55. Իրազէլ Յ., Հայկական տպագրութեան անցեալից (Մի քանի ճշտումներ եւ լրացումներ), [հնդկահայ տպագրության մասին], Գ. տարի, 1935, ք. 2, մայիս-յունիս, Ժ., էջ 27-44

56. Իրազէլ Յ., Պատառիկներ հայ մամուլի անցեալից («Շտեմարան» թերթ Կալկաթայի), Ա. Ընդհանուր դիտողութիւններ, Բ. «Շտեմարան»-ի բարոյական տեղը, Գ. Արտաքին նկարագրութիւնը, Դ. «Շտեմարան»-ի ժամանակը, [կիսատ է մնացել պետք է ավարտվեր հաջորդ համարում], Զ. տարի, 1939, ք. 5, յունուար-մարտ, ԻԵ., էջ 23-40

57. Խոնդկարեան Արշամ, Օպրոզիցիան Հան-

¹³ Անձը պարզել չհաջողվեց:

րոպետական Հայաստանում, [Փարիզից] I. Փոխարքայի պալատից - Արամեանցի տունը. 1. Մինչեւ Հոկտեմբեր, Ա. տարի, 1933, թ. 1, սեպտեմբեր-հոկտեմբեր, Ա., էջ 63-82; I. 2. Հոկտեմբերից յետոյ, Ա. տարի, 1933, թ. 2, նոյեմբեր-դեկտեմբեր, Բ., էջ 68-79; II. Պետական խորհրդի անդամ, Բ. տարի, 1934, թ. 1, նոյեմբեր-դեկտեմբեր, Գ., էջ 76-97; III. «Անձեւ քասօի» մէջ, Բ. տարի, 1934, թ. 3, մայիս-յունիս, Ե., էջ 42-60; IV. Դահլիճի առաջին տազնապար էւ կոպիցիան, Բ. տարի, 1934, թ. 4, յուլիս-օգոստոս, Զ., էջ 73-95

58. Կազանչեան Յարութիւն, Համեմատութիւն մը Հռոմի Ա. Պետրոս եւ Վաղարշապատի Ա. Հռիփսիմէ եկեղեցիներուն յատակագիծերու միջեւ, [կան հետևյալ գծագիրները. 1. Ա. Հռիփսիմէի տաճարին յատակագիծը, 2. Հռովմի Ա. Պետրոս տաճարին յատակագիծը, 3. Ա. Հռիփսիմէի տաճարի սկեման, 4. Հռովմի Ա. Պետրոսի տաճարին սկեման, 5. Ա. Հռիփսիմէի տաճարին կտրուածքը, որ կը ցուցնէ շինութեան ներքի մասը], Դ. տարի, 1936, թ. 3, մայիս-յունիս, ԺԵ., էջ 38-43

59. Կեսար Ա.¹⁴, Հայկական հարցը 19-րդ դարուն (Յետադարձ ակնարկ), [Փարիզից], 1. Կացութիւնը Օսմանեան կայսրութեան մէջ, 2. Բարենորոգումի թրջական փորձեր, 3. Հայ ժողովուրդի կացութիւնը, 4. Եւրոպական պետութիւններու դերը, 5. Հայ ժողովուրդի ձգտումները եւ գործադրած ճիգերը, 6. Եզրակացութիւններ, Զ. տարի, 1938, թ. 4, հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 1-26

60. Կիլիկեցի Յ. Տօթթ.¹⁵, Քանի մը դիտողութիւններ, [Փարիզից], [Սայաթ Նովա անվան բացատրություն], Բ. տարի, 1934, թ. 5, սեպտեմբեր-հոկտեմբեր, Է., էջ 123-125

61. Հայրապետեան Երւանդ, Հայ թատերական գրականութեան զարգացման ընթացքը, [Թեհրանից], Ե. տարի, 1937, թ. 1, յունուար-մարտ, ԺԸ., էջ 16-30

62. Ղորղանեան Գ. Զօր., Հայաստանիի Հանրապետութիւնը եւ պետութիւնները, I. Բրետ-Լիտովսկից մինչեւ Սեւր, Բ. տարի, 1934, թ. 3, մայիս-յունիս, Ե., էջ 29-41; II. Սեւրից - Լոզան, Բ. տարի, 1934, թ. 4, յուլիս-օգոստոս, Զ., էջ 54-72

63. Մանդէլշտամ Անդրէ Ն., Ռուսաստանի քաղաքականութիւնը Թիւրքահայաստանում մեծ պատերազմի նախօրեակին, I. Գ. տարի, 1935, թ. 1, յունուար-ապրիլ, Թ., էջ 4-12; II. Հայկական բարենորոգումները 1913-14. 1. Օսմանեան կայսրութեան ներքին վիճակը, 2. Ռուս եւ գերման ծրագիրները, 3. Ռուսական նախաձեռնութիւն, 4. Ռուս կառավարութեան պաշտօնական տեսակէտը, 5. Գերմանիայի դիրքը ռուսական նախաձեռնութեան հանդէպ, 6. Բարոն Վանզէնհայմի ամբաստանութիւնները Ռուսաստանի Պոլսի դեսպանատան, 7. Ռուսական ծրագիրը եւ Ենի-Քեյի խորհրդաժողովը, 8. Գերմանական հակակրօքեան իմաստը, 9. Ռուս-գերմանական բանակցութիւնները, 10. Ռուս-գերմանական համաձայնութիւնը, 11. Ռուս-թիւրքական համաձայնութիւնը, Գ. տարի, 1935, թ. 2, մայիս-յունիս, Ժ., էջ 55-77; III. Ռուս-գերմանական քաղաքականութեան բախումն ու վերջնական համաձայնութիւնը, Գ. տարի, 1935, թ. 3, յուլիս-օգոստոս, ԺԱ., էջ 71-76

64. Մանուկեան Հմայեակ, Դէպքերը Վասպուրականում (1914-1918), [գրել է 1919թ., Երևանում, կա Արամ Մանուկյանի 1918թ. մարտի 6-ի նամակը Երևանից՝ Վանի ընկերներին], Ե. տարի, 1937, թ. 1, յունուար-մարտ, ԺԸ., էջ 51-63; Ե. տարի, 1937, թ. 2, ապրիլ-յունիս, ԺԹ., էջ 73-77; Ե. տարի, 1934, թ. 3, յուլիս-հոկտեմբեր, Ի., էջ 90-95; Զ. տարի, 1938, թ. 1, նոյեմբեր-յունուար, ԻԱ., էջ 88-95; Զ. տարի, 1938, թ. 2, յունուար-մայիս, ԻԲ., էջ 72-77

65. Մինախորեան Վահան, Անջատականները, [Պրագայից], I. Նախադրեալները, II. Առաջին անջատումը, III. Հ. Հ. Դաշնակցութիւնը, IV. «Նախագիծը», Ա. տարի, 1933, թ. 1, սեպտեմբեր-հոկտեմբեր, Ա., էջ 100-111; V. Երկու դատերի խնդիրը, VI. Լեւոն Աթաբեկեանի հայեացքներն ու դերը, VII. Անջատական շարժման արժէքն ու վախճանը, Ա. տարի, 1933, թ. 2, նոյեմբեր-դեկտեմբեր, Բ., էջ 90-107

66. Մինախորեան Վահան, Արհաւիրքի օրեր¹⁶, [Բելգրադից], I. Սամսոնի հայութիւնը, Գ. տարի, 1935, թ. 3, յուլիս-օգոստոս, էջ 60-70; II. Տեղահանութիւն, Դ. տարի, 1935, թ. 4, սեպտեմբեր-դեկտեմբեր, էջ 72-88; III. Դէպի «Ներքին գաւառներ», Դ. տարի, 1936, թ. 1, յունուար-փետրուար, ԺԳ., էջ 48-67; IV. Անդառնալի երթ, Դ. տարի, 1936, թ. 2, մարտ-ապրիլ, ԺԴ., էջ 66-81; V. Մահուան սպասումներ, Դ. տարի, 1936, թ. 3, մայիս-յունիս, ԺԵ., էջ 1-19; VI. Վերադարձը, Դ. տարի, 1936, թ. 3, յուլիս-հոկտեմբեր, ԺԶ., էջ 30-45; VII. Կեանքի եւ մահուան միջեւ, Դ. տարի, 1936, թ. 5, նոյեմբեր-դեկտեմբեր, ԺԷ., էջ 24-49; VIII. Ճակատագիր, Ե. տարի, 1937, թ. 2, ապրիլ-յունիս, ԺԹ., էջ 1-37; IX. Գոյութեան վերքեր, Ե. տարի, 1937, թ. 3, յուլիս-հոկտեմբեր, Ի., էջ 19-44; X. Հայութեան բեկորներ, Զ. տարի, 1938, թ. 1, նոյեմբեր-յունուար, ԻԱ., էջ 31-56

67. Մինախորեան Վ., Մի հին թռուցիկ, [1885թ. փետրվարի 22-ի], Բ. տարի, 1934, թ. 3, մայիս-յունիս, Ե., էջ 98-100

68. Մինախորեան Վ., Մի հին թռուցիկ, [1885թ. փետրվարի 22-ի], Բ. տարի, 1934, թ. 3, մայիս-յունիս, Ե., էջ 98-100

¹⁴ Անձը պարզել չհաջողվեց:

¹⁵ Հավանաբար Հովհաննէս Քյուրուկյանն է:

¹⁶ Հրատարակությունը կիսատ է մնացել հուշերն առանձին գրքով տպագրելու պատճառով, տե՛ս Զ. տարի, 1938, թ. 2, յունուար-մայիս, էջ 104: Սակայն, այն հրատարակվել է ավելի ուշ, տե՛ս Մինախորեան Վահան, 1915 թականը: Արհավիրքի օրեր: Առաջաբան՝ Ա. Վրացեան, հրատ. «Հ. Հ. Կորյոնեան կտակ», Վենետիկ, Տպ. «Ա. Դագար», 1949, է+474 էջ:

68. Մինախորեան Վահան, *Շլիսելբուրգի հայ կալանատըրը*, [սոցիալիստ-ինդափոխական գործիչ Յովհաննես Արսլանի Մանուշարյանց], Բ. տարի, 1934, թ. 6, նոյեմբեր-դեկտեմբեր, Ը., էջ 67-72

69. Մինախորեան Վահան, *Փոթորիկից առաջ* (Պատերազմի 20ամեակի առթիւ), I. Քննադատութիւններ, II. Թիւրքիայի չեզոքութեան հարցը, III. Թիւրք-ռուսական բանակցութիւնները, IV. Դ. Յ. Դ. Էրզրումի Ընդհանուր ժողովը, V. Խզում, Բ. տարի, 1934, թ. 4, յուլիս-օգոստոս, Ե., էջ 1-20

70. Մուրատի [Սեբաստացի] *Յուշատետրը (1915թ. Յունի-Նոյեմբ. 29)*, [կա խմբագրութեան ներածական], Ա. տարի, 1933, թ. 2, նոյեմբեր-դեկտեմբեր, Բ., էջ 122-127; Բ. տարի, 1934, թ. 1, նոյեմբեր-դեկտեմբեր, Գ., էջ 98-108; Բ. տարի, 1934, թ. 2, մարտ-ապրիլ, Դ., էջ 94-108

71. *Յովհ. Թումանեանը պատերազմի հանդէպ* (Մահուան 15ամեակին առթիւ), [ինդիանկը չկա նշված, արտատպւթյուն Բաքվի «Արեւ» թերթի 1914թ. նոյեմբերի 9-ի համարից], Զ. տարի, 1938, թ. 4, հոկտեմբեր-դեկտեմբեր, ԻԴ., էջ 79-82

72. *Յովհաննէսեան Արտաշէս, Ռուբէն Սեւակի քերթուածները*, [կիսատ է մնացել, պետք է ավարտվեր հաջորդ համարում], Զ. տարի, 1939, թ. 5, յունուար-մարտ, ԻԵ., էջ 11-22

73. *Նահապետեան Դ. Գ., Հայաստանի գմբէթաւոր եկեղեցիները եւ անոնց ճարտարապետական արժէքը*, Դ. տարի, 1936, թ. 2, մարտ-ապրիլ, ԺԴ., էջ 24-30

74. *Նարդունի Շաւարշ, Նպաստ մը հայ եւ թուրք աշուղական գրականութեան համեմատական ուսումնասիրութեան*, [Փարիզից], Գ. տարի, 1935, թ. 1, յունուար-ապրիլ, Թ., էջ 45-56; Դ. տարի, 1936, թ. 2, մարտ-ապրիլ, ԺԴ., էջ 31-37; Գ. տարի, 1935, թ. 2, մայիս-յունիս, Ժ., էջ 78-81; Դ. տարի, 1935, թ. 4, սեպտեմբեր-դեկտեմբեր, ԺԲ., էջ 30-36

75. *Նարդունի Շաւարշ, Փորձ համեմատութեան հայ գողթան երգերու եւ երբայական բանաստեղծութեան միջեւ*, Ա. տարի, 1933, թ. 1, սեպտեմբեր-հոկտեմբեր, Ա., էջ 53-62

76. *Ոսկեան Սեդրակ, Մատթէոս ՉարիՖեան* (Իր մահուան 10ամեակին առթիւ), Բ. տարի, 1934, թ. 5, սեպտեմբեր-հոկտեմբեր, Ե., էջ 41-46

77. *Պարսամեան Սկրտիչ, Վահան Թէքեան*, [Փարիզից], I. Կենսագրական տեղեկութիւններ, II. Նկարագիրի մը ողբերգութիւնը, III., Ա. տարի, 1933, թ. 2, նոյեմբեր-դեկտեմբեր, Բ., էջ 47-54; Բ. տարի, 1934, թ. 1, նոյեմբեր-դեկտեմբեր, Գ., էջ 50-61

78. *Ջամալեան Արշակ, Ամենայն Հայոց Բանաստեղծը* (Յ. Թումանեանի մահուան տասնամե-

ակի առթիւ), [Փարիզից], Ա. տարի, 1933, թ. 1, սեպտեմբեր-հոկտեմբեր, Ա., էջ 14-27; Ա. տարի, 1933, թ. 2, նոյեմբեր-դեկտեմբեր, Բ., էջ 19-31

79. *Ռոստոմ, Հայ-վրացական փոխարարե-րութիւնները*, [կա խմբագրութեան ներածական, վերցված է ՀՀԴ Դիվանից], Դ. տարի, 1936, թ. 1, յունուար-փետրուար, ԺԳ., էջ 1-11

80. *Սամսոն* [Ստ.Թաղևոսյան], *Դէպքերը հայ-պարսկական սահմանի վրա*, [Թավրիզից], [1918-1920թթ. դէպքեր], Դ. տարի, 1935, թ. 4, սեպտեմբեր-դեկտեմբեր, ԺԲ., էջ 1-13

